ARMLEGAL EXPO ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ Է ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՈՒՄԸ. ԱՐԱ ՁՈՀՐԱԲՅԱՆ

23.04.2019 20:12

ՀՀ փաստաբանների պալատը «Իրավունքը զարգացման գրավական» կարգախոսով այսօր՝ ապրիլի 23-ին, փաստաբանական գրասենյակների ցուցահանդես է կազմակերպել: ARMLEGAL EXPO ցուցահանդեսին մասնակցել են ավելի քան երեք տասնյակ մեծ ու փոքր փաստաբանական գրասենյակներ, Արցախի Հանրապետության փաստաբանների պալատը և հանրային իրավական ծառայություններ մատուցող կառույցներ (Ֆինանսական համակարգի հաշտարարը, Հայաստանի Հանրապետության նոտարների պալատը, Իրավունքի պաշտպան միավորումը, Հայաստանի հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը, Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա, Հայաստանի արտոնագրված թարգմանիչների միությունը և այլն):

Ցուցահանդեսին մասնակցել են ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը, Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, Ազգային ժ-ողովի պատգամավորներ Արթուր Դավթյանը, Տարոն Սիմոնյանը և այլք:

Միջոցառումը ավանդական դարձնելու Պալատի տեսլականը ներկայացրել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նշելով, որ.«**Այս քայլով Փաստաբանների պալատը նպատակ է դնում Հայաստանում զարգացնել Փաստաբանական գրասենյակների ստեղծման մշակույթը, փաստաբանության մեջ զարգացնել թիմային աշխատանքը, թիմ, որտեղ կարող են լինել տարբեր կարծիքներ, քանի որ լավագույն արդյունավետ լուծումը միայն թիմային աշխատանքով կարելի է գտնել: ARMLEGAL EXPO ցուցահանդեսի նպատակներից հաջորդն իրավունքի գերակայության հանրահռչակումն է: Արձանագրեմ նաև, որ փաստաբանի մասնագիտությունն այն տեսակն է, որը ամենաշատն է պայքարում իրավունքի գերակայությանը հասնելու համար»:**

Արա Զոհրաբյանն առաջ է քաշել Հայաստանն իրավունքի զարգացած կենտրոնների մեկը դարձնելու գաղափարը և որպես դրան ուղղված առաջին քայլ՝ մատնանշել ARMLEGALEXPO-ի կազմակերպումը:

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը ողջունելով փաստաբանական գրասենյակների ցուցահանդեսը հայտնել է,-«նման միջոցառումները լայն հնարավորություն են ընձեռում առանձին փաստաբանական գրասենյակների ձևավորած լավագույն ավանդույթներին ծանոթանալու և դրանք տարածելու համար: Մեր երկրի ժողովրդավարության արժեքների կայացման և զարգացման գործում շատ կարևոր է փաստաբանների դերը»:

Փաստաբանական գրասենյակների ցուցահանդեսին կազմակերպվել են մասնագիտական քննարկումներ տարբեր իրավական թեմաներով, լուսանկարչական ցուցահանդես-մրցույթ, որի հաղթողները պարգևատրվել են դրամական մրցանակներով, ինչպես ՀՀ փաստաբանների պալատի, այնպես էլ փաստաբանական գրասենյակների անունից:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

SARDARYAN BROTHERS
ULPIANOS
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



INTRA VIRES
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })